Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
«08» օգոստոս 2018 թ.
թիվ 2020 - Ա հրամանի

ԾՐԱԳԻՐ

«ԱՆՀԱՍ ԵՎ ՀԻՎԱՆԴ ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» ԹԵՄԱՅՈՎ ԵՐԿՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Օգոստոս – հոկտեմբեր 2018թ., ք. Երևան և ՀՀ մարզեր

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակ (ՅՈՒՆԻՍԵՖ)

Օր 1	
09:00-09:45	Ծնարանում նորածինների վերակենդանացում:
09:45-10:45	**Գործնական դաս՝** Նորածինների վերակենդանացում: Դասի ընթացքում իրական ծնարանային պայմաններում ներկայացվելու է ծննդաբերության տեղի պատրաստումը, ծննդաբերությունից հետո նորածնի չորացումը, անհրաժեշտության դեպքում պարկի ու դիմակի միջոցով նորածնի օդափոխության իրականացումը, սրտի զարկերի հաճախականության հաշվման տեխնիկան, օգնության կանչման հնարավոր սխեման և օգնականների հեռախոսահամարների ֆիքսումը, ինչպես նաև միջամտությունից հետո սարքավորումների մաքրումն ու ախտահանումը: Դասավանդողի կողմից ներկայացնելուց հետո մասնակիցները բաժանվում են 5-ական թիմերի և մասնակի կրկնում ամեն գործողությունը, այնուհետև փոխվում դերերով, մինչև յուրաքանչյուր մասնակից չիրականացնի վերևում նշված գործողությունները առնվազն մեկ անգամ: Գործնական դասը անցկացվելու է նեո-նատալի մանեկենի միջոցով:
10:45-11:00	Սուրճի ընդմիջում:
11:00-11:45	Թթվածնային թերապիա:
11:45-13:00	**Գործնական դաս՝** Պուլսօքսիմետրի կիրառում: Դասավանդողի կողմից միացվում է առկա պուլսօքսիմետրը: Ներկայացվում պարամետրերի սահմանները, սահմանների փոփոխության հնարավորությունը և պուլսօքսիմետրի միացման հարմար տեղակայումները: Մանակիցները բաժանվում են 5-ական խմբերի և յուրաքանչյուր խմբի բոլոր մասնակիցները միմյանց միացնում, անջատում և ամրացնում են պուլսօքսիմետրերը և վերլուծում ցուցանիշները:
13:00-14:00	Ճաշի ընդմիջում:
14:00-14:45	Մարմնի նորմալ ջերմաստիճանի պահպանում:

14:45-16:00	**Գործնական դաս՝** ինկուբատորների և վերակենդանացման սեղանների օգտագործում: Դասի ընթացքում դասավանդողի կողմից ներկայացվում է ջերմակարգավորման սեղանի և ինկուբատորի միացման, անջատման սխեման, աշխատանքային ռեժիմները, հնարավոր ձայնային ազդանշանների պատճառները և վերացման մեթոդները: Այնուհետև մասնակիցները բաժանվում են 5-ական խմբերի: Յուրաքանչյուր թիմին տրվում է առաջադրանք որևէ հիվանդ երեխայի մոդելով: Թիմը պետք է վերլուծի իրավիճակը և առաջադրի լուծումներ՝ ջերմակարգավորման տեսակի ընտրության ինչպես նաև միացումից մինչև տվիչների միացման գործընթացի իրականացում:
	Մաշկը մաշկին մեթոդի (Կենգուրու) թեմայով տեսահոլովակի դիտում: (10 րոպե)
Օր 2	
09:00-09:45	Էնտերալ սնուցում և հեղուկի ներմուծում:
09:45-10:45	**Գործնական դաս՝** Նորածնի էնտերալ սնուցման մեթոդ: Կրծքին մոտեցման տեխնիկայի բացատրում և ներկայացում բաժնում առկա հասուն նորածնի և մոր մասնակցությամբ: Մասնակիցների կողմից կերակրման տեխնիկայի գնահատում՝ նորածնային անկետաներում առկա կրծքով սնուցման գնահատման թերթիկի միջոցով: Քանի որ տվյալ միջամտությունը լիարժեք ֆիզիոլոգիական է, ապա մասնակիցները կանցնեն բաժանմունքով և այնտեղ կօգնեն առկա մայրիկներին ճիշտ ամրակցել նորածիններին կրծքին, նախապես վերջիններից ստանալով բանավոր համաձայնություն:
	Անհաս նորածինների կերակրման թեմայով տեսահոլովակի դիտում: (6 րոպե 30 վայրկյան)
10:45-11:00	Սուրճի ընդմիջում:
11:00-11:45	Հիգիենա և վարակների կանխարգելում:
11:45-13:00	**Գործնական դաս՝** Ձեռքերի լվացում: Դասավանդողի կողմից ներկայացվում է ձեռքերի լվացման ճիշտ մեթոդաբանությունը: Բոլոր մասնակիցները կրկնում են ձեռքերի լվացման տեխնիկան և դասավանդողի կողմից գնահատվում է վերջինիս իրականացման արդյունավետությունը:
	Վարակի կանխարգելման մասին տեսահոլովակի դիտում: (7 րոպե 9 վայրկյան)
13:00-14:00	Ճաշի ընդմիջում:
14:00-14:45	Ընտանիքի աջակցություն և զարգացնող խնամք:
14:45-16:00	**Գործնական դաս՝** Նորածնի մոտ զարգացնող խնամք: Դասավանդողի կողմից ներկայացվելու է նորածնի մաշկը մաշկին կոնտակտի իրականացում: Մասնակիցները բաժանվում են զույգերի, առաջինը իրականացնում է մաշկը մաշկին կոնտակ՝ ներկայացված տեխնիկայով, իսկ երկրորդը գնահատում է իրականացված կոնտակտը: Գործնական դասը անց է կացվելու մանեկենների և փափուկ խաղալիքների օգնությամբ:

Թիրախային լսարան՝ մանկաբարձներ, նեոնատալ բուժքույրեր:
Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ ընդհանուր 180 հոգի, յուրաքանչյուր դասընթացին 15 մասնակից:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ «ԱՆՀԱՍ ԵՎ ՀԻՎԱՆԴ ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» ԹԵՄԱՅՈՎ ԵՐԿՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՑԻ

	Անցկացման վայր	**Անցկացման ամսաթիվ**	**Դասընթացավար**
1.	ք. Երևան, «Գրիգոր Նարեկացի» ԲԿ	15-16.08.2018թ.	Մ. Դարակչյան
2.	Սյունիքի մարզ, ք. Գորիս, Գորիսի ԲԿ	16-17.08.2018թ.	Մ. Զարգարյան
3.	Կոտայքի մարզ, ք. Աբովյան, «Աբովյանի ծննդատուն» ՊՓԲԸ	23-24.08.2018թ.	Մ. Դարակչյան
4.	Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Գավառի ԲԿ	30-31.08.2018թ.	Պ. Մազմանյան
5.	Լոռու մարզ, ք. Վանաձոր, Վանաձորի ԲԿ	3-4.09.2018թ.	Մ. Զարգարյան
6.	Արարատի մարզ, ք. Արտաշատ, Արտաշատի ԲԿ	6-7.09.2018թ.	Մ. Դարակչյան
7.	Տավուշի մարզ, ք. Իջևան, Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն	13-14.09.2018թ.	Պ. Մազմանյան
8.	Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Վաղարշապատի ծննդատուն	19-20.09.2018թ.	Մ. Դարակչյան
9.	Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Եղեգնաձորի ԲԿ	19-20.09.2018թ.	Մ. Զարգարյան
10.	Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Աշտարակի ԲԿ	27-28.09.2018թ.	Պ. Մազմանյան
11.	Շիրակի մարզ, ք. Գյումրի, Գյումրու ծննդատուն	1-2.10.2018թ.	Մ. Զարգարյան
12.	ք. Երևան, Մոր և մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոն	4-5.10.2018թ.	Պ. Մազմանյան